ԿՐՕՆԱԿԱՆ

Սրբոյն Եղիշէի Վարդապետի ասացեալ յաղագս Թաբօր լերին

Վասն լերինն գեղեցկութեան և վայրացըն վայելչութեան եթէ կամիք ախորժելով ունկն դնել, սակաւիկ մի երկրորդեցից զտեսիլ ցանկալի տեղւոյն, լսելով յԱւետարանէն գիտէք ամենեքին բայց մեր անձամբ իսկ հասեալ և աչօք մեր տեսեալ ոչ միայն առանձին, այլ բազում ընկերօք սրբովք․ ոչ ըստ մարմնոյ ախորժուն բաղձանաց, այլ առ գութ սիրոյն Քրիստոսի․ քանզի բնակեալ են անդ բազմութիւն սքանչելի եղբարց, որք հոգւով յաճախագոյն վարին քան թէ մարմնով ։

Զի թէ ըստ մարմնաւոր մտաց ոք հայի 'ի տեղի անդր՝ վայելչագոյն երևի քան զտեսիլ բազում լերանց․ նա զի՝ նիստ նորա է 'ի մեծ դաշտի, յերկրին Գալիլեացւոց․ և այլ լերանց ամենևին հուպ ոչ գոյ նմա․ բայց տեսանելով հեռագոյն Հերմոն, և ինքն բարձր է և բոլորանիստ․ և շուրջ զիւրև ունի ինքնաբուղխ գուբ ջրոյ ։

Եւ են անդ խիտ առ խիտ ծառատունկ բազում և պտղաբերքն յանձրևաբեր ամպոց․ և լինի ազգի ազգի պտուղք, քաղցրահամ և բազում այլ համք և հոտք անուշութեան, որթք գինեբերք, որ և թագաւորաց է ախորժելի ըմպել․ չորեքեան ոդք 'ի նա հնչելով, յոլովագոյն հիւսիսայինն զօրանայ 'ի նմա ։

Եւ շաւիղն ընդ որ ելեալ է Տէրն 'ի վեր, յայժ ուղորդ է ելն․ այսր անդր մանուածելով արարեալ է զճանապարհն․ ով և կամեսցի ելանել և կալ յաղօթս դիւրաւ զելսն 'ի վեր առնիցէ․ և յորժամ ելանէ ոք 'ի բուն գլուխ լերինն, բոլոր դաշտն առ հասարակ երևի ։

Յարևելից կողմն մինչև ցյորդանան գետ, յարևմտից՝ մինչև ցծովն մեծ յաշխարհն Քանանացւոց, 'ի հիւսիսոյ՝ մինչև 'ի ծովն Տիբերացւոց, 'ի հարաւոյ՝ մինչև 'ի ծովն մեծ․ և ամենայն մեծութիւն վայրացն նիստ է գեօղ առ գեօղ և ագարակ առ ագարակ, և բազում քաղաքք 'ի մէջ նոցա․ և ինքն ի կատար լերինն ովտաձև, գոգաձև․ գոն և ծառք սակաւագոյնք ։

Եւ 'ի տեղւոջն՝ ուր երևեցաւ նոցա լուսաւոր պայծառութեամբն յարևելից կողմանէ հովտացն ըստ բանիցն Պետրոսի՝ հեռագոյն 'ի միմեանց շինեալ երիս եկեղեցիս, և են պաշտօնեայք բազումք զատեալք և որոշեալք յամենայն մարմնաւոր ցանկութեանց․ թէպէտ և կան մարմնով, այլ ոչ վարին ըստ մարմնոյ ընքշանաց․ այնպիսիք են առաքինիք, զի և կարծէ ոք ոչ զնոցանէ, եթէ շարժեսցէ զնոսա կարօտութիւն մարմնոյ․ այլ որպէս հաճոյ թուեցաւ միաբանելոցն ամենեցուն, իւրաքանչիւր արարեալ փայտատ երկմատենի, և այնու խարխարեալ յուղէն զթանձրահող հովտացն սերմա-

նելով ՚ի նոսա ցորեան և գարի. և եթէ այլ ունդք ինչ որ ՚ի պէտս կալոյ մարդկան, և ՚ի չափ հասակաց ծայրախուզ հնձելով ամանափշուր կասուն մարդացի. ապա հողմով հանեն զարդիւնս շեղջոցն և արկանեն յըշտեմարանս. զնոյն դորձեալ աղան ՚ի ձեռն երկանի մեծաւ տաժանմամբ. որ ըստ օրէ պատրաստեն ըղհարկաւոր կերակրին. և կերակրին հացիւ և ջրով լոկով և աղիւ համեմեալ, զօր և խոլորիկս անուանեն,

Իսկ զայլ յաւելուած անուշահոտութեան կերակրոց՝ ՚ի ձմեռնային ժամանակի քաղեն զնիւթ լերինն. և թըթուեցուցանեն աղիւ և ջրով զոպայիւ. և ինքեանք ասէին, կարի յոյժ օգտակար է ՚ի տապ խաշակի.

Իսկ հօրքոտանի ամենեքին ՚ի վեր ՚ի լեառն ոչ ելանէ. այնպէս պահեն զնա ճանապարհին, իբրև թէ ժողովք հըրեշտակաց իցեն. վասն զի՝ են արդարև իբրև զանմարմին. չէք նոցա գինի ՚ի սափորս. բայց եթէ ՚ի պատրաստութեան բաժակին. չէք նոցա իւղ յամանս վասն կերակրոց, բայց եթէ ՚ի ծախս անշէջ լապտերայն. և ոչ համապատրաստ կամին ճաշակել, այլ սովորութիւն է նոցա բնական՝ յամարայնի ագանելով ձմերայնի քասարակելով զաւուրս շաբաթին. իսկ որ հզօրագոյնքն են ՚ի նոսա զողջոյն շաբաթն ձգելով ՚ի գլուխ տանին,

Այս եթէ եկեսցէ եղբայր ոք ՚ի հեռաստանէ, առ սէր սուրբ ժողովոյն կամ եղև ամենեցուն ՚ի սովորական խորտիկսըն լուծանել բերան. կարի փոյթ ՚ի հոգևորական կերակուրն, զի մի երբէք դադարեսցին ՚ի ճաշակելոյ. ոչ միայն զհարիւր յիսուն սաղմոսն արկեալ ՚ի վայր ձայնիւ, այլ բովանդակ զսուրբ կտակարանս Եկեղեցւոյն, որով աշաւոր և փառաւոր ձայնիւ շքեղացուցանեն յերկս եկեղեցեան. է՛ զոր ընթեռնուն բանիւք, և է՛ զոր պաշտեն փոխխական ձայնիւք. զդադարումն ոչ երբէք առնուն յագելով փոխանորդութեամբ միմեանց. բաժանելով հասարակութեամբ, առանց կատարելոյ ունին զկարգ պաշտամանն տունջեան և գիշերոյ.

Եւ ին բազմութիւն ժողովոցն վեցեկին, և միՆն յերկս եկեղեցեան մեծագոյն քան զերկուսն, զոր և տէրունեան իսկ անուանեն. և յերկուսն նշխար սուրբ առաքելոցն եդեալ է, որք և հիմնարկեցին զաեղին. յայնմ աւուր ասելով զանուն երից տաղաւարացն և անուանեն զնոսա ՚ի վկայարանս սուրբս՝ յանուն Մովսիսի և Եղիայի և զՔրիստոսի աղօթս պաշտամանն ՚ի կիւրակին կատարէին ՚ի տէրունեան եկեղեցին և յերկուսն երթալով սաղմոսիւք, և անդ զՔրիստոսի փառաւորեն,

Այս են ամենեքեան մաշկազգեստք. գիտեն և ձեռակերտիկ արուեստի, ոմն է, որ զփերիւզս առնէ, և ոմանք՝ թէ զայլն ՚ի նպաստ գործեն. և զինչ այլ պէտք են, գործեն զարուեստն, ոչ յայլ պէտս ինչ օգտի, այլ ՚ի գինս ձի-

թոյ հանապազորդ կանթեղացն վառման, և ծախս օթևնացն, ուստի զմաշկեղէն հանդերձիկն կազմեն և հողաբերս հաթայթէն։

Պարծեալ են 'ի նոսա և ծերքն, որք ոչ կարեն զպէտս անձանցն վճարել. միաբան այսպիսեացն առաւել հոգ տանին քան անձանց։ Եթէ յանկարծ ուրուք 'ի միոս շարժեցաւ յիշելով զանձկալի կերակուր, յայտնէ զախտ իւր միւսոյն, որ լաւագոյն քան զնա իցէ և միաբան աղօթս մատուցեալ, փափաքելի են յառողջութիւն։ Իսկ եթէ զայս դուռն մեղաց քակէ ոք, բազում վնասք արգելուն 'ի նմանէ, զոր ոմանք բազմագլուխ գազան կարծեցին զկարողութիւն մարմնոյ. տես, զի նոքա նախ զնա սպանին. և յայլ ևս բազում վնասակար գլխոցն նորա աներկիւղ դադարեցին 'ի լերինն Թաբօր. զի յերկրաւոր ցածութեան՝ յերկնից բարձրութիւնն առանց ամօթոյ մեղաց կարասցեն առ Տէր իւրեանց վերաբերիլ, որպէս Մովսէս և Եղիա փառօք Տերամբ 'ի Թաբօր լերինն. և ես տառապեալս քան զամենայն մարդ, որ հեռացայ 'ի հեռուստ ընդ տէրունեան շաւիղն 'ի Էառն Թաբօր. և աչօք իմ տեսի զժողով սքանչելի եղբարցն. և Փրկչատուր մարդասիրին փառք յաւիտեանս յաւիտենից ամէն։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի՞ՆՉ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՄԱՐԴ ՈՒՐԻՇ ԿԵՆԴԱՆԵԱՑ ՀԵՏ·

Համեմատելով մարդս աշխարհիս վերայ եղող արարածոց հետ՝ կ՚տեսնեմք, որ նա ամենէն կատարեալ և գլխաւոր էակն է։ Գլխաւորն է կ՚ասեմք անոր համար, որ մեզնէ քանի մի աստիճան վար՝ կան բիւրաւոր հրաշալի բոյսերու և զանազան կենդանիներու աշխարհ մի։ Զանոնք ալ Աստուած ստեղծեց, ուրեմն պարտական եմք զանոնք յարգել։ Մեր ամեն տեսած, շօշափած և զգացած բաները յԱստուծոյ ստեղծուած են։ Եթէ զԱստուած կ՚սիրեմք, ուրեմն նորա արարածներն ալ պէտք է մեզի սիրելի լինին։ Մեր երախտագիտութիւնը այն ատեն յայտնած կ՚լինիմք Աստուծոյ, եթէ նորա ամենատես գթութեան բարիքները խոհեմութեամբ վայելեմք։ Այս հրաշալեաց աշխարհի վերայ ամփոփ ուշադրութեամբ նայելով և բնութեան բազմատեսակ հարստութիւնները տեսնելով՝ մեր մտքերը պէտք է ուղղեմք առ Այն՝ որ լի է սիրով և բարութեամբ։

Այն կենդանիք առ հասարակ մարդուս պէս շնչաւոր են և զգայուն. վասն զի մեզ նման կ՚զգան ցաւն ու բերկրութիւնը. իսկ շատ անգամ իրենց խելքով ու հասկացողութեամբ մարդկային խելքի կարողութեան մօտ են, շատ անգամ ևս մարդը կ՚գերազանցեն իրենց մարմնոյ և կազմուածքի յատկութիւններովը։